

գրելոյն առ Անդրեաս. «Որպէս եւ ' իբոյոցդ եւ ' իթղթոց ամենասիրելի որդւոյ մերոյ Լեւոնի պայծառափայլ թագաւորին Հայոց՝ հասու եղեաք, եթէ դաշն եղեալ է քո եւ յիշեալ թագաւորին, զի որդի քո առցէ ' իկնութիւն զդուստր նորա, եւ ' ի պատճառս դստերն՝ լիցի ժառանգ աթոռոյ թագաւորին այնորիկ, այնպէս զի կալցէ զայն՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց, թէպէտ եւ մեռանել եւս հանդիպիցի աղջկանն մինչ չեւ ածեալ՝ իկնութիւն: Մեք՝ այդմ արժանի եւ օգտակար բանի՝ ըստ աղաչանաց քոց եւ թագաւորին՝ հաւանեցաք:– Տուեալ 'ի Լատերան՝ իՌ նոնայց մարտի, յամի երրորդի քահանայապետութեան մերոյ»²²¹:

Բ. Խնամք Լեւոնի 'ի պահպանութիւն երկրին

Երկու հոգք կարեւորք կային՝ իսիրտ Լեւոնի յամաց բազմաց. մի, յապահովել զժառանգ աթոռոյ թագաւորութեանն, եւ զոյգ նմին երկրորդ՝ ամրացուցանել զնոյն այնքան, զի ոչ միայն պաշտպանեսցի՝ իշրջակայ թշնամեացն, այլ եւ հերքեսցէ զնոսին, հատանելով կամ զողանալով՝ ի սահմանաց նոցին, իբրեւ՝ իբոնաւորաց եւ յեկամտից, եւ ընդարձակեսցի իւրն շնորհատուր թագաւորութիւն: Առ այս՝ թէպէտ ոչ սակաւ խափան եղեն յերկարեալ վեճք անտիոքեան իշխանութեանն, մանաւանդ սաղրանօք կոմսին Տրիպոլեայ եւ Յովհաննու կաթողիկոսի՝՝ թմամանակի գծտութեանն, յարուցանելով ընդդէմ արքային զհզօր դրացին՝ զսուլտանն Իկոնիոնի, (որ եւ յաղմկի ժամանակին կորգեաց զԲերդուսն՝ իՀայոց), այլ պարտէտ աչօք արթուն կալով Լեւոնի՝ որոնէր ժամ պատեհ, յարձակելով եւ՝ իվերայ նորա, եւ՝ իվերայ նմանեացն, երբեմն յաջողելով եւ կորգելով, եւ երբեմն ձեռնունայն դառնալով, բայց ոչ առանց տագնապեցուցանելոյ: Յափշտակողն Բերդուսի Խոսրովշահ կամ Քէյ Խոսրու՝ ոչ իշխեալ յառաջ եւս անցանել՝ իսահմանս Լեւոնի ընդ արեւելս, դարձաւ յարեւմուտս՝ ի վերայ նորահաստատ յունական կայսերութեան Նիկիոյ. եւ ընդդէմ նորա Լասկարիս փեսայացեալն յեղբորդուստր Լեւոնի, գուցէ եւ գունդ օգնա-

²²¹ **Honorius**, etc. Cum sicut tam ex tuis, quam Charissimi in Christo filii nostri Leonis Armeniæ Regis Illustris literis intelleximus, quod inter te et Regem prædictum convenerit, ut natus tuus ipsius filiam accipiat in uxorem, ita ut eidem Regi ratione filiæ suæ prout hæres succedat in regnum, habiturus illud toto tempore vitæ suæ, si etiam contingat eam decedere ante quam reducatur ab illo; Nos quod super hoc provide ac utiliter factum est, Te, ac Rege prædicto supplicantibus, duximus approbandum.

Dat. Laterani, IV, Non. Martij, Pont. Nostri Anno III.